Հավելված 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
24 սեպտեմբերի 2024 թվականի N 373 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հոկտեմբերի 10-ից

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ «IDMERCH» ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿ/ՕՎԵՐԴՐԱՖՏ

1.	Նպատակ	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին գրավային և առանց գրավային ապահովման տրամադրվող բիզնես վարկ/օվերդրաֆտ՝ • ձեռնարկատիրական գործունեության իրականացում, • ընթացիկ գործունեության ֆինանսավորում, • այլ բանկերում գործող վարկային պարտավորությունների տեղափոխում «Այդի Բանկ» ՓԲԸ:		
2.	Գումար	«Այդի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և/կամ ՀՀ այլ բանկերի կողմից տրամադրված POS տերմինալներով[1] ՝ վերջին 6 (վեց) և 12 (տասներկու) ամիսների ընթացքում իրականացված միջին ամսական շրջանառությունների, նվազագույն գումարի մինչև 6 (վեցապատիկի) չափով և/կամ Իդրամ ՍՊԸ-ի QR/online ckeckout վճարման համակարգի միջոցով վերջին 6 (վեց) և 12 (տասներկու) ամիսների ընթացքում իրականացված միջին ամսական շրջանառությունների նվազագույն գումարի մինչև 10 (տասնապատիկի) չափով: Ընդ որում տրամադրվող վարկի/օվերդրաֆտի գումարը չի կարող գերազանցել հարկային հաշվետվության համաձայն՝ վերջին 6 (վեց) և 12 (տասներկու) ամիսների ընթացքում իրականացված միջին ամսական շրջանառությունների նվազագույնի գումարը, իսկ Բանկում գործող անգրավ և/կամ առանց բիզնեսի վերլուծության (ներառյալ սքորինգային համակարգի կիրառմամբ տրամադրված) վարկերի մնացորդը՝ ներառյալ նոր տրամադրվող վարկը/օվերդրաֆտը, չպետք է գերազանցի 50,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:		
	Նվազագույն[2] գումար	500,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ		
	Առավելագույն գումար[2]	50,000,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ		
3.	Ժամկետ (ամիս)	12-60 ամիս		
4.	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	
5.	Տոկոսադրույքի տիպը[3]	Լողացող տոկոսադրույք		
6.	Վարկի տարեկան Տոկոսադրույք[3, 4] (Համաձայն հավելվածի)	Անվանական	ԱԲՀՏ+/5,2%-8,95%/	ԱԲՀՏ+/7,6%-10,35%/
		Փաստացի	15,52%-19,91%	12,16%-15,26%
7.	Օվերդրաֆտի օգտագործված մասի նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույք[3, 4] (Համաձայն հավելվածի)	Անվանական	ԱԲՀՏ+/6,2%-9,7%/	ԱԲՀՏ+/8,1%-11,35%/
		Փաստացի	13,87%-16,98%	10,75%-13,67%
8.	Տարեկան տոկոսադրույք օվերդրաֆտի չօգտագործված մասի համար	Չի սահմանվում		
9.	Տրամադրման եղանակ	Անկանխիկ, հաճախորդի՝ Բանկում բացված վճարային քարտի/բանկային հաշվի միջոցով		

[1] Վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարում ընդունելու հնարավորություն տվող տերմինալի ցանկացած տարատեսակ, այսուհետ միասին՝ POS տերմինալ:
[2] Արտարժույթի փոխարժեքի հաշվարկի համար հիմք է ընդունվում հայտի հաստատման օրվա դրությամբ Բանկի կողմից տվյալ արժույթի «վաճառքի» համար սահմանված փոխարժեքը:
[3] «Այդի Բանկ» ՓԲԸ հաշվարկային տոկոսադրույքը (ԱԲՀՏ) և հաշվարկման մեթոդաբանությունը անցնելով հղումով: Սույն պայմաններով տրամադրվող վարկերի համար ԱԲՀՏ-ն կարող է փոփոխվել տարեկան 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, ընդ որում փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն հրապարակելուց 30 օրացուցային օր հետո: Վարկի լողացող (անվանական) տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն շեմերը ՀՀ դրամի դեպքում համապատասխանաբար՝ 10% և 20%, իսկ ԱՄՆ դոլարի դեպքում՝ 7,5% և 16,5%:
[4] ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

		ՎԱՐԿԱՌՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ
10.	Կարգավիճակ	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր
11.	Վարկառուին/երաշխավորին ներկայացվող տարիքային սահմանափակում	ԱՁ կարգավիճակ ունեցող անձանց, ֆիզիկական անձանց տարիքը վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 68 տարեկանը:
12.	Բիզնեսի գործունեության նվազագույն ժամկետ (անընդհատ)	6 ամիս
13.	Վարկառուի (այդ թվում՝ նրա կանոնադրական կապիտալում 20% և ավել մասնակիցների) /երաշխավորի/գրավատուի վարկային պատմության նկատմամբ պահանջներ	• Վարկի ստացման դիմումի ներկայացման օրվա դրությամբ գործող ժամկետանց/դասակարգված պարտավորությունների (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն) բացակայություն, • Վարկի ստացման դիմումի ներկայացման օրվա դրությամբ՝ նախորդող 12 ամսիների ընթացքում նախկինում ստացված վարկերի (վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն) գծով մարումների հանրագումարային ոչ ավել քան 30 ուշացած օր • Վարկի ստացման դիմումի ներկայացման օրվա դրությամբ՝ նախորդող 3 ամսիների ընթացքում նախկինում ստացված վարկերի (վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն) գծով մարումների հանրագումարային ոչ ավել քան 9 ուշացած օր, • վարկային պատմության բացակայությունն ընդունելի է:
14.	Վարկային հայտի ուսումնասիրման վճար	Չի սահմանվում
15.	Վարկի/ օվերդրաֆտի տրամադրման վճար	Չի սահմանվում
16.	Հաշվի բացման վճար (եթե հաճախորդը Բանկում չունի հաշիվ)	Համաձայն՝ **ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների**
17.	Հաշվից վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	Համաձայն՝ **ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձանց և Անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների, փոխանցումների և «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագների**
18.	Վճարային քարտի բացման և սպասարկման սակագներ	Համաձայն վճարային քարտերի տեղեկատվական ամփոփագրերով սահմանված պայմանների:
19.	Օվերդրաֆտի և տոկոսագումարների մարման եղանակ[5]	Ամենամսյա պարտադիր մուտք քարտային հաշվին նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ օգտագործված Օվերդրաֆտի գումարի 10%-ը և վճարման ենթակա տոկոսագումարները մինչև ընթացիկ ամսվա 15-ը: Մայր գումարի մնացորդի և հաշվեգրված տոկոսագումարի մնացած մասի ամբողջական մարումը սահմանվում է ժամկետի ավարտին:
20.	Մարման արտոնյալ ժամանակահատված [6]	Մինչև 45 օր Նախորդ ամսվա ընթացքում օվերդրաֆտի անկանխիկ օգտագործված գումարների նկատմամբ (բացառությամբ քարտից քարտ փոխանցումների, ներբանկային և միջբանկային փոխանցումների ՀՀ տարածքում և սեփական հաշիվների միջև) տոկոսներ կարող են չհաշվարկվել, եթե հաճախորդը նշված եղանակով օվերդրաֆտի օգտագործված մասի մարումը կատարի մինչև հաջորդող ամսվա 15-ը ընկած ժամանակահատվածում:
21.	Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ	Անուիտետային՝ վարկի մայր գումարի և տոկոսագումարի հանրագումարի ամսական հավասարաչափ մարումներ
22.	Ապահովվածություն	• Բանկում գործող հաշիվների ապագա դրամական հոսքերի գրավ, • Երաշխավորություն՝ ❖ Իրական շահառուի, ❖ Իրավաբանական անձանց դեպքում՝ 20% և ավելի մասնակցություն ունեցող հիմնադիր/սեփականատեր հանդիսացող անձանց, • Անշարժ գույք, • Տրանսպորտային միջոց, • Հիմնական և շրջանառու միջոցներ, • Բանկի համար ընդունելի՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գույք կամ գույքային իրավունք:
23.	Գրավի առարկայի գնահատում	Անշարժ գույք, տրանսպորտային միջոց հանդիսացող գրավի առարկան պետք է գնահատվի Բանկի հետ համագործակցող մասնագիտացված կազմակերպություններից մեկի կողմից, որոնց ցանկը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Գնահատողների ցանկ
24.	Գրավի առարկայի ապահովագրություն	Վարկի տրամադրման վերաբերյալ իրավասու մարմնի որոշմամբ կարող է պահանջել գրավի առարկայի ապահովագրություն: Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների ցանկը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Ապահովագրական ընկերություններ
25.	Օվերդրաֆտի պայմանագրի վաղաժամկետ դադարեցման տուգանք	Պայմանագրի գումարի մինչև 5%-ի չափով
26.	Վարկի վաղաժամկետ մարման տուգանք	Չի սահմանվում
27.	Տույժեր և տուգանքներ	ժամկետանց վարկի/ օվերդրաֆտի գումարի տույժ օրական 0.1%

[5] Օվերդրաֆտի տոկոսագումարը հաշվարկվում է հիմք ընդունելով օվերդրաֆտի օգտագործված մասը:
[6] Մարման արտոնյալ ժամանակահատված տրամադրվում է միայն Visa Platinum Business քարտի դեպքում:

		ժամկետանց տոկոսագումար տույժ օրական 0.1%
28.	Հայտի ընդունման և վարկի ձևակերպման վայր	Բանկի մասնաճյուղեր և Գլխամասային գրասենյակ
29.	Տրամադրման դրական գործոններ	1) Դրական վարկային պատմություն 2) Կայուն դրամական հոսքեր 3) Գրավի առարկային համապատասխանությունը Բանկի պահանջներին 4) Բիզնես միջավայր 5) Այլ գործոններ ԱՁ կարգավիճակ ունեցող անձանց դեպքում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում գործող անգրավ վարկերի հաշվարկում ներառվում է նաև տվյալ ֆիզիկական անձի «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում գործող անգրավ վարկերը, իսկ իրավաբանական անձանց դեպքում հաշվարկվում է այդ ընկերության անվամբ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում գործող անգրավ վարկերը:
30.	Մերժման գործոններ	1) բացասական վարկային պատմություն 2) ֆինանսական ոչ բավարար վիճակ 3) գրավի առարկայի անհամապատասխանությունը Բանկի պահանջներին 4) կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում 5) այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը 6) հաճախորդի եկամտի աղբյուրի ռիսկային ոլորտ 7) այլ գործոններ
31.	Գլխավոր վարկային պայմանագրի կնքում	Հաճախորդի ցանկությամբ վերջինիս հետ կարող է կնքվել գլխավոր վարկային պայմանագիր մինչև 240 ամիս ժամկետով
32.	Որոշման կայացման առավելագույն ժամկետ	Բանկի կողմից պահանջվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օր, որից հետո առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հաճախորդին
33.	Որոշման վավերականության ժամկետ[7]	30 աշխատանքային օր
34.	Որոշման վերահաստատման ժամկետ	Առավելագույնը մեկ անգամ, որոշման վավերականության ժամկետը լրանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ վերահաստատման օրվա դրությամբ գործող վարկավորման պայմաններով
35.	Վարկը տրամադրելու ժամկետ	Վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջական ներկայացնելու և գրավի իրավունքի գրանցումից հետո առավելագույնը 4 աշխատանքային օր, եթե հաճախորդը վարկը ավելի ուշ ստանալու ցանկություն չի հայտնել:
36.	Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկ	• Առնվազն նախորդող 6(վեց) ամիսների հարկային հաշվետվություններ, • Վարկառուի, երաշխավորի, գրավատուի վարկային պատմության մասին տեղեկություն, • Այլ բանկերի կողմից տրամադրված POS տերմինալներով իրականացված շրջանառությունը հիմք ընդունելու դեպքում՝ առնվազն նախորդող 6(վեց) ամիսների, այն հաշվի քաղվածքը, որին ստացվում են POS տերմինալով ընդունված վճարումներից դրամական միջոցները՝ տվյալ Բանկի կողմից տրված և վավերացված տարբերակը/excel աշխատանքային ֆորմատով տարբերակը, • Իդրամ ՍՊԸ-ի QR/online checkout վճարման համակարգի միջոցով իրականացված շրջանառությունը հիմք ընդունելու դեպքում՝ առնվազն նախորդող 6(վեց) ամիսների քաղվածքները, • Այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության
37.	Այլ պայմաններ	1) Այլ բանկերի կողմից տրամադրված POS տերմինալներով իրականացված շրջանառությունը հիմք ընդունելու դեպքում վարկը/օվերդրաֆտը հաստատվում և տրամադրվում է պայմանով, որ Հաճախորդը վարկի/ օվերդրաֆտի տրամադրումից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում ապահովում է Բանկում գործող POS տերմինալով շրջանառություն, առնվազն սույն տեղեկատվական ամփոփագրի համաձայն պահանջվող սահմանաչափով: Վարկի տրամադրումից հետո յուրաքանչյուր 6(վեց) ամիսը մեկ Բանկը իրականացնում է շրջանառության մոնիթորինգ: Այն դեպքում, երբ մոնիթորինգի արդյունքները չեն համապատասխանում սույն ամփոփագրի և/կամ Հաճախորդի հետ կնքված պայմանագրի պայմաններին, ապա Բանկն իրավունք ունի պահանջել վարկի վաղաժամկետ մարում, իսկ օվերդրաֆտի դեպքում՝ սահմանաչափի նվազեցում կամ կիրառել կողմերի միջև Պայմանագրով սահմանված պատասխանատվության այլ միջոցներ: 2) Իդրամ ՍՊԸ-ի QR/online checkout վճարման համակարգի միջոցով իրականացված շրջանառությունը հիմք ընդունելու դեպքում վարկը/օվերդրաֆտը հաստատվում և տրամադրվում է պայմանով, որ Հաճախորդը վարկի/ օվերդրաֆտի տրամադրումից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում ապահովում է Իդրամ ՍՊԸ-ի QR/online checkout վճարման համակարգի միջոցով իրականացվող շրջանառության իրականացումը Բանկում բացված բանկային հաշվով՝ առնվազն սույն տեղեկատվական ամփոփագրի համաձայն պահանջվող սահմանաչափով: Վարկի տրամադրումից հետո յուրաքանչյուր 6(վեց) ամիսը մեկ Բանկը իրականացնում է շրջանառության մոնիթորինգ: Այն դեպքում, երբ տվյալ եռամսյակի միջին ամսական շրջանառությունը չի համապատասխանում սույն ամփոփագրի և/կամ

[7] Բանկը իրավասու է հրաժարվել վարկը տրամադրելուց, եթե փոփոխվել են վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման համար էական համարվող պայմանները (օրինակ՝ գրավի արժեքի փոփոխություն, կետանցված պարտավորություններ, բանկային հաշիվների կալանք/արգելանք և այլն):

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի պայմաններին, ապա Բանկն իրավունք ունի պահանջել վարկի վաղաժամկետ մարում, իսկ օվերդրաֆտի դեպքում՝ սահմանաչափի նվազեցում կամ կիրառել կողմերի միջև Պայմանագրով սահմանված այլ միջոցներ:

Հավելված

Կորպորատիվ հաճախորդներին տրամադրվող «IDMERCH» բիզնես վարկի/օվերդրաֆտի տոկոսադրույքների սահմանման մատրիցա

		Վարկի գումարի և ՊՈՍ տերմինալներով և/կամ ԻԴրամ ՍՊԸ-ի QR/online checkout վճարային համակարգի կիրառմամբ իրականացված միջին ամսական շրջանառության գումար/ներ/ի մեծության հարաբերակցություն			
		50%	**60%**	**70%**	**100%**
Վարկի գումար (ՀՀ դրամ)	500,000-2,000,000	17.5%	17.75%	18%	18.25%
	2,000,001-6,000,000	14.5%	14.9%	15.20%	15.4%
	6,000,001 և ավել	16.5%	16.75%	17%	17.25%

		Վարկի գումարի և ՊՈՍ տերմինալներով և/կամ ԻԴրամ ՍՊԸ-ի QR/online checkout վճարային համակարգի կիրառմամբ իրականացված միջին ամսական շրջանառության գումար/ներ/ի մեծության հարաբերակցություն			
		50%	**60%**	**70%**	**100%**
Վարկի գումար (ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար)	500,000-2,000,000	13.5%	13.75%	14%	14.25%
	2,000,001-6,000,000	12.5%	12.75%	13%	13.25%
	6,000,001 և ավել	11.5%	11.75%	12%	12.25%

		Օվերդրաֆտի գումարի և ՊՈՍ տերմինալներով և/կամ ԻԴրամ ՍՊԸ-ի QR/online checkout վճարային համակարգի կիրառմամբ իրականացված միջին ամսական շրջանառության գումար/ներ/ի մեծության հարաբերակցություն			
		50%	**60%**	**70%**	**100%**
Օվերդրաֆտի գումար (ՀՀ դրամ)	500,000-2,000,000	18.5%	18.75%	18.8%	19%
	2,000,001-6,000,000	17.5%	17.75%	17.8%	18%
	6,000,001 և ավել	15.5%	15.75%	16%	16.25%

		Օվերդրաֆտի գումարի և ՊՈՍ տերմինալներով և/կամ ԻԴրամ ՍՊԸ-ի QR/online checkout վճարային համակարգի կիրառմամբ իրականացված միջին ամսական շրջանառության գումար/ներ/ի մեծության հարաբերակցություն			
		50%	**60%**	**70%**	**100%**
Օվերդրաֆտի գումար (ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար)	500,000-2,000,000	14.5%	14.75%	15.00%	15.25%
	2,000,001-6,000,000	13.5%	13.75%	14.00%	14.25%
	6,000,001 և ավել	12%	12.25%	12.50%	12.75%

Ընդհանուր դրույթներ

1. Բանկն իրավասու է հաճախորդի հետ պայմանագիր կնքել սույն փաստաթղթով սահմանված սակագներից և պայմաններից տարբերվող այլ սակագներով և պայմաններով:
2. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: Եթե հաճախորդը համաձայն չէ տոկոսադրույքի փոփոխության հետ, ապա իրավունք ունի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել պայմանագիրը՝ վերադարձնելով տրամադրված վարկի հիմնական գումարն ամբողջությամբ և վճարելով հաշվարկված տոկոսները և այլ վճարները: Անկախ Բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
3. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց
4. ***Արտարժույթով տրամադրվող վարկեր***
   ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ արտարժույթով վարկերի մարումները կատարվում են տվյալ Վարկի արժույթով հաշվից, իսկ դրա վրա անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ նաև ցանկացած արժույթով այլ հաշիվներից, ընդ որում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով, ուստի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված տվյալ արժույթի փոխարժեքի մեծության փոփոխությունից:
5. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
6. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:
7. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ** Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝
   - Տույժ/տուգանքներ
   - Տոկոսագումարներ
   - Մայր գումար
8. Բանկի և ՀՀ օրենսդրության համաձայն միկրո ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող վարկառուի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58-24-21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:
   9. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:
   10. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:
   11. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
9. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ Այդի Բանկ ՓԲԸ-Ի պաշտոնական կայքում՝ www.dbank.am հետյալ հղումով:
10. **Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:**
11. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBusiness Mobile հավելվածի և Բանկ հաճախորդ (IDBusiness Online - online.idbank.am/) առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են **«Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»** :Համակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ